ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄ-ՄՀ-ԳՀԾՁԲ-26/03

ք. Մեղրի «21» ապրիլ 2026 թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքը», ի դեմս համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի, որը գործում է օրենսդրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սպարտակ Հակոբյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է անշարժ գույքի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար

ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մեղրիի համայնքապետարան	«Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ
Ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2	Ք.Երևան,Կոմիտասի պողոտա 54Բ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 900302235032	Հ/Հ 1570086626010200
ՀՎՀՀ 09425378	ՀՎՀՀ 02305118
Խաչատուր Մնդրեսյան	Սպարտակ Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ.	/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 1
«21» ապրիլ 2026թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԾՁԲ-26/03 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						Մատուցման	
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	**70331800/1**	**Անշարժ գույքի գնահատման ծառայություններ՝** **Ըստ Հավելված 1.1-ի**	դրամ	650 000	Պատվիրատուի պահանջի համաձայն	ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնք	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ըստ պատվիրատուի պահանջի՝ յուրաքանչյուր անգամ պատվերը ստանալուց հետո 15 օրացույցային օրվա ընթացքում, մինչև 25.12. 2026թ ներառյալ ընկած ժամանակահատվածում: Ընդ որում մինչև 25. 12.2026 թվականը չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվում է, առանց որևէ իրավական պարտավորություն առաջացնելով Կատարողին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
Ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900302235032
ՀՎՀՀ 09425378
Խաչատուր Անդրեասյան
____
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ
Ք.Երևան,Կոմիտասի պողոտա 54Բ
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570086626010200
ՀՎՀՀ 02305118
Արտաշավ Հակոբյան
____
/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1.1.
« » ապրիլ 2026թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԾՁԲ-26/03 ծածկագրով պայմանագրի

*** Ծառայության մատուցումն իրականացվելու ըստ Պատվիրատուի կողմից տրված պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի դեպքում գնահատման ենթակա գույքի քանակը սահմանելու է Պատվիրատուն:**

***Յուրաքանչյուր պատվերի շրջանակում ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է ոչ ավել, քան 20 օրացույցային օր, որի հաշվարկը կատարվում է Պատվիրատուի կողմից տրված պատվերի օրվանից, բացառությամբ առաջին պատվերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված առանց կողմերից որևէ մեկի նկատմամբ հետագա որևէ պարտավորության առաջացման:**

1. Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ներառյալ.

–«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին»

–«Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

–«Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24 օգոստոսի 2022 թվականի N 1355-Ն որոշումը,

2. Կատարողը պետք է ունենա Ծառայությունների մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան որակավորում, ծառայությունները պետք է մատուցվեն որակավորում ունեցող անձի (անձանց) կողմից:

Ծառայությունները մատուցելիս պետք է պահպանվեն գույքի (գույքային իրավունքների) քանակական ու որակական բնութագրերով, դրա նկատմամբ իրավունքներով ու սահմանափակումներով, ինչպես նաև գնահատման ստանդարտներով գնահատման մեթոդների և գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ ներկայացվող պահանջները: Կատարողը պարտավոր է նաև պահպանել գնահատողի վարքագծին ՀՀ օրենսդրությանբ ներկայացվող պահանջները:

3. Ծառայությունների արդյունքները պետք է ձևակերպվեն գնահատման հաշվետվություններով (էլեկտրոնային տարբերակով և 2 օրինակ տպագիր տարբերակով), որոնք պետք է պարունակեն Կատարողի անվանումը, իրավաբանական հասցեն և գնահատվող գույքի (գույքային իրավունքի).

➢ գնահատման առաջադրանքը, ելակետային տվյալներն ու դրանք հավաստի աղբյուրներից ստանալը հավաստող փաստաթղթերը, նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների (ներառյալ՝ օտարման ժամանակ առաջացող) մասին տեղեկատվությունը, նկարագիրը և տեղազննության արդյունքները (ներառյալ՝ բավարար չափով լուսանկարներ), տեղազննության ու գնահատման ամսաթվերն ու տարեթվերը, ստացված շուկայական արժեքի որոշման մեթոդաբանությունն ու դրա ընտրության հիմնավորումները, վերլուծության արդյունքում ձևավորված շուկայական արժեքի գնահաշվարկները, գնահատման համար օգտագործվող փաստաթղթերի ցանկը:

Հաշվետվությունները պետք է կազմված լինեն գույքի (գույքային իրավունքների) գնահատման գործընթացներին անծանոթ անձանց համար պարզ և ընկալելի ձևով, իսկ դրանց տպագիր և էլեկտրոնային տարբերակները Կատարողը պետք է առձեռն ներկայացնի Պատվիրատուին՝ ՀՀ Սյունիքի մարզ,Մեղրի համայնք, Զ.Անդրանիկի 2

հանցեում՝ սահմանված կարգով փաստաթղթավորված վիճակով:

Սահմանված ժամկետներում Ծառայության արդյունքները Պատվիրատուին չներկայացնելու, կամ ոչ պատշաճ կարգով ներկայացնելու դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի նաև դրա վերաբերյալ գրավոր պարզաբանում: Ներկայացված պարզաբանումը Պատվիրատուի կողմից ոչ հիմնավոր համարվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով կիրառվելու են գնման պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Ծառայությունների արդյունքներում Պատվիրատուին ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ կամ այլ թերություններ հայտնաբերվելու դեպքում Կատարողը պարտավոր է այդ մասին ծանուցվելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումները (շտկումները, փոփոխությունները)՝ Ծառայությունների արդյունքները սահմանված կարգով վերստին ներկայացնելով Պատվիրատուին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մեղրիի համայնքապետարան	«Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ
Ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2	Ք.Երևան,Կոմիտասի պողոտա 54Բ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 900302235032	Հ/Հ 1570086626010200
ՀՎՀՀ 09425378	ՀՎՀՀ 02305118
Խաչատուր Անդրեասյան	Սպարտակ Հովսեփյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1.2.
«21» ապրիլ 2026թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀՇՁԲ-26/03 ծածկագրով պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ
մատուցվող ծառայությունների

N	Բնակավայրերի հողերի գնահատման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում նախատեսվում է կատարել /հողամասի մակերեսը/	չափման միավոր	քանակ	Միավորի գին
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ			
1	Մինչև 1000մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	25 000
2	1001 մ² - 3000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	30 000
3	3001 մ² - 6000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	35 000
4	6001 մ² - 10000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	40 000
5	10001 մ² - 50000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	45 000
6	50001 մ² -ից ավելի ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	50 000
	ՈՉ ԳՅՈՒՂ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ			
1	Մինչև 100մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	25 000
2	101 մ² - 300 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	30 000
3	301 մ² - 1000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	35 000
4	1001 մ² - 3000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	40 000
5	3001 մ² - 5000 մ² ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	45 000
6	5001 մ² - 10000 մ2 ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	50 000
7	10001 մ² -ից ավելի ընդհանուր մակերեսով հողամաս	հատ	Ըստ պատվերի	55 000
	ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔ. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
1	Մինչև 100մ² ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	30 000
2	101 մ² - 300 մ² ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	40 000
3	301 մ² - 500 մ² ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	45 000
4	501 մ² - 1000 մ² ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	50 000
5	1000 մ² ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	60 000
6	1001 մ² -ից ավել ընդհանուր մակերեսով	հատ	Ըստ պատվերի	65 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
Ք.Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900302235032
ՀՎՀՀ 09425378
Խաչատուր Անդրեասյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ
Ք.Երևան,Կոմիտասի պողոտա 54Բ
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570086626010200
ՀՎՀՀ 02305118
Սպարտակ Հովսեփյան
/ստորագրություն/

Հավելված N 2
«21» մարտի 2026թ. կնքված
ՍՄ-ՄՀ-ԳՀԾՁԲ-26/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	70331800/1	Անշարժ գույքի գնահատման ծառայություններ	... %	... %	Դրամական միջոցների փոխանցումը կատարվելու է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա/փաստացի մատուցված ծառայության դիմաց/										100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեղրիի համայնքապետարան
Ք.Մեղրի, Զ.Անդրանիկի 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900302235032
ՀՎՀՀ 09425378
Խաչատուր Անդրեասյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆուլ Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ
Ք.Երևան,Կոմիտասի պողոտա 54Բ
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570086626010200
ՀՎՀՀ 02305118
Սպարտակ Հակոբյան
/ստորագրություն/ Կ.Տ